ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Զրառատ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

31 հոկտեմբերի 2011թ. Գյուղ Զրառատ

2011թվականի հոկտեմբերի 31-ին տեղի է ունեցել Զրառատ համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Զրառատ համայնքի ավագանու անդամներ՝ Վարդգես Ենգիբարյանի, Գոհար Հակոբյանի, Գառնիկ Մելքոնյանի

Զրառատ համայնքի ղեկավարի աշխատակազմից՝ Կարինե Սարգսյանի, Էմմա Բարսեղյանի, Ժան Համբարձումյանի, Լուսինե Եղիազարյանի

ինչպես նաև համայնքի բնակիչների:

ՕՐԱԿԱՐԿԱՐԳ - Զրառատ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից 2010թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2011 թվականի հոկտեմբերի 31- ը ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

ԼՍԵՑԻՆ - Զրառատ համայնքի ղեկավարի կողմից 20.09.2010թ. – 31.10.2011թ ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը: Նա ներկայացրեց 2010թվականի վերջին 2,5 ամիսների և 2011 թվականի առ 01 նոյեմբերի ժամանակահատվածում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կատարված հետևյալ աշխատանքները՝

2010թվականի հունվարի 15-ին համայնք ավագանին իր 2 որոշմամբ ընդունել է 2010 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 8410,6 հազար դրամ, ծախսերը՝ 8410,6 հազար դրամ: Հողի հարկի չափը կազմել է 634,2 հազար դրամ, 2010 թվականի հողի հարկը հավաքագրվել է 636,6 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100 % - ը: 2010 թվականի գույքային հարկերը կազմել է 200 000 դրամ, հավաքագրվել է 200 000դրամ, որը կազմել է տարեկան պլանի 100 % -ը:

2010 թվականի դեկտեմբերի 27-ին համայնքի ավագանին իր 27-Ն որոշմամաբ ընդունել է 2011 թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 8555,1 հազար դրամ, ծախսերը՝ 8555,1 հազար դրամ: Հողի հարկը կազմել է 634,2 հազար դրամ, որից 10 ամիսների ընթացքում հավաքագրվել է 420 հազար դրամ, այսինքն 10 ամսվա հողի հարկի 79,7 % -ը: Գույքային հարկերը կազմել են 250 000 դրամ, որից անցած 10 ամիսների

ընթացքում հավաքագրվել է 224,1 հազար դրամ, այսինքն 10 ամսա գույքահարկի 107,7 % -ը:

Ձեռք է բերվել նոր համակարգիչ և տպիչ:

Ճանապարային անվտանգ երթևեկությունը համայնքային երթևեկության ճանապարների և գյուղամիջյան ճանապարների վրա ապահովելու համար կատարվել է ավազի և խճաքարի փռում:

Հսկողություն է իրականացվել առևտրի ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել է ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի թույտվություններ, որոնցից գանձվել է համապատասխան տուրքի գումարներ:

Գյուղապետարանի վարչական շենքի պատուհանների կոտրված ապակիները վերականգնելու համար ձեռնարկվել են անհրաժեշտ և համապատասխան միջոցներ:

Ձեռք է բերվել ցուցանակներ՝ Զրառատ համայնքի հասցեավորման, փողոցների անվանումների և շինությունների համարակալման համար:

Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման միջոցառումների շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին մասնակցելու համար ձեռք է բերվել համերգի տոմսեր և անհատույց տրամադրվել մարդկանց:

ԵԼՈՒՅԹՆԵՐ – Ելույթ ունեցան ավագանու անդամներ Վարդգես ենգիբարյանը, Գոհար Հակոբյանը

ՈՐՈՇՎԵՑ - Հաշվետվությունը ընդունել ի գիտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ